



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

18858

FuGewuuntin§



Utp - wol  
1903

Օ. Տ. Վ. 1. 161

ՓԱԹՆԵԿԵՍ.

144

# ԲԱՆԱՏԵՂԾ

Վոդրւիլ մէկ արարուածով:


ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(Յարեփնլած.)

Գիշե թ. 40 Կ.

Ա. Ա. Ք. Ա. Ն. Կ. Պ. Ա. Պ. Ո. Ռ. Ա. Պ. Ո. Լ.  
Տպարան Սանոյեանի և Սևիանեանի.

1903



ԱՐՄ.

3-26802

891.99

4-24

3-26802

ՓԱՌՆԱԿԵՍ

# ԲԱՆԱՏԵՂԾ

Վողրուիլ մեկ արարուածով:

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(Բարեփոխած.)

Գիշե է 40 դ.

ԽԱՅ. № 22367

12003

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ.

Տպարան Սանոյեանի և Ստեփանեանի.

1902



ՕՐԴԻՆԱ

Дозволено Цензурою Тифлисъ. 1 Августа 1902 г.



29371-63

ՏՐՈՒԹՅՈՒՆ  
ԳՈՐԾ ԺՈՂՈՎ ԸՆՉԵՐԻ Ք.

- |   |    |         |
|---|----|---------|
| մանաւութեան շրահատեան, ուսուցիչ . . . . . | 22 | տարեկան |
| 2. Յոլակ ճերմակեան, ժողովրդական թերու     |    |         |
| փաստաբան . . . . .                        | 40 | "       |
| 3. Թափիթ, Միհրանի ծառանում մի և երես 20   |    | "       |
| 4. Թողրոս, Յոլակի ծառանում մի և երես 30   |    | "       |
- Անգըլ պատահում է Ա . . . . . քաղաքում.

Դուժող անձանց նկարագիրը.

1. ՄԻԶՐԱՆ ՀՐԱՀԱՏԵԱՆ. — Ինչ ունի չունի՝ թափել է իւր շորերի վրայ։ Հագնում է շատ կող և եւրոպական ճամաքում շորեր։ Գործ է ածում պէնսոնէ, բարակ ձեռնափայտ, ձեռնոց և ծածկում կլոր, բայց լայնեղերը եւրոպական փափուկ զրխարկ։ Նորածիլ բեխերը միշտ դէպի վեր է սրում և թողնում է սրածայր կարճ միքուր։
2. ՅՈԼԱԿ ՃԵՐՄԱԿԵԱՆ. — Հագնում է երկայն հնամաշ սկ սերթուկ՝ և կօկարդանիշ նոյնպիսի զլխարկ. անդրավարտիքը շագանակագոյն շալից։ Հաստ ձեռնափայտ, միքուքի մէջտեղը ածելած և բեխերը միշտ ուղղուած դէպի բերանը՝ ինչան արբեցութեան։
3. ԹԱՒԻԹ. . . . . Սկ թաղիքէ զլխարկ, կարճ և գեղին շուխա, կարմրագոյն գուլպէքը քաշած մինչև ծնկները, հագին չուստ, սկ զագաքից ալխալուկ և կաշուէ հասարաւ գոտի։

4. ԹՈՐՈՒ . . . . . ծառայողի հնամաշ գլխարկի, կօկարգը պո-  
կած, որի տեղը երեսւմ է: չափնում է սկ  
շուխա և կապում է արծաթեայ հասարակ  
գօտի. գործ է ածում երկայնավիզ կօ-  
շիկներ:

Բեմը եւրեայցնում է մի հասարակ սենեակ՝ աղքաս կահաւորու-  
թեամբ: Մի սեղան գրենով, լրագրենով, տեսրակներով լի, չորս  
արոռ, սեղանի վրայ մի զոյգ մումակալ, մի ապակեայ ծաղկաման,  
մի հայելի եւ մի լամպա: Մեջտեղից եւ կողեւրից դռներ. աջակող-  
մեան պատի վրայ երկու լուսամուտ: Վարագոյրը բացուելիս՝ բե-  
մը դատարկ է:

## ԲԱՆԱՏԵՂԾ

ԿԱՑԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԵՒ ԱՐԱՐՈՒԱՃՈՎ

## Տ Ե Ս Ի Լ Ա.

ԴԱԼԻԹ. (Դրսից), Լաւ, լաւ, աղա ջան, (Ներս զալով  
յատակի երկայն չօթքը ծեռքին) Գնաց... անջախ պրծանք.  
(Խոտենում վերցնում է սեղանի վրայի դատարկ լամպա-  
րը) Էլի դարտակել ա... ամէն գըշեր մի գրուանքայ նաւ-  
թը հէրիք չի անում... զրում ա հա գրում, չի էլ քօռանում:  
Գրածն էլ մի բան ըլնի, չհանդամը. մի օր հարցըի՝ ասաւ  
խաղ եմ զրում: Սաղ աշրանի աշրդ էլ նոր եմ տեսնում.  
աշըլի ջուխտ աշըն էլ որ քօռ չըլնի ինչ լազաթ: Մի խօս-  
քով, ուրիշ ջուռա աղա ա: Մին-մին, մէկ էլ ես տեսնում  
ձէնը զցեց գլուխը, միթամ թէ խաղ ա ասում: Մի չնորքով  
ձէն էլ ա ունենանց՝ նվ ինչ կասի: Ընէնց ա օռնաւմ ոնց որ գէզի  
զլիսին նստած ատամնին թափած քսոստ չուն: Վախտ-վախտ,  
աղբէր, ինչ սուտ ասեմ, զրա խաղ ասիլու վրայ փրթկունս  
որ չի պլծնում խտակ զիւտում ա... հէրսիցը քիշ ա  
մնում ինձ ուտի... մէկ էլ տեսար աշքերը խփեց ու բերանը  
բաց արաւ... էլ պազէց, գուռակ, էլ ես ինչ զիտեմ զուրին ու  
չուլակ... բան չի թողնում, որ չ'ասի: Ինքն էլ, միթամ, վարժա-

պետ առ բարով... տնաքանդը հայերէն ուշունց տալ էլ չի  
գիտում: Էս քանի օրս էլ աշքումս մի թահար փոխուել ա...  
քնած տեղն էլ ա խօսում... խօսելիս էլ եա լաց ա ընում,  
եա շուտ շուտ ինչ որ Աննմանի անուն ա տալի: Ես ասեմ, էկ  
Աննմանը ով որ ա՝ խխտ ա գուր եկել իրան, որ եախիցը  
ձեռք չի քաշում: Մի օր հարցրի՝ խօսրը կտուր զցեց ու  
վրէս շարացաւ, ամա՝ ոնց որ վարաւուրդ եմ անում՝ մի քան  
կայ, Աստուած վերջը բարի անի... մախլաս: Ուր ա, Աստուած  
տայ նշանուի՝ բարի թէ վազուան ասածի պէս, զոգնոցը մի  
քիշ խելք էլ ա բերի էկ օրհնածի հըմար, թէ չէ մաննան  
բէշբէթար (ծեռքի ափի մէջ փշելով) չը կայ (մատը զլիսին  
է ղնում) դարդակ ա: Խօսը մերը, տոնը մերը՝ ես էլ եմ  
միտքս փոխել, կարմիր զոգնոց եմ ուգում, մարդու բան շատէք:  
Պլտի նշանուիմ, աղբէր, տեսնենք ես առաջ կընկնեմ՝ թէ իմ  
աղբն: Թէ նա իր Աննմանն ունի՝ իմ խալի նուրաքն էլ սպա-  
կաս չի: Ամա ի՞նչ լաւ կընի ի՞ն վախտն է... ես նշանուած՝  
իմ աղբն նշանուած... էլ մեր քէֆին քէֆ չի հասնի... ես իմ  
կուխնուց՝ նա իւր օթախիցը ձին ձինի իր տանիք ու մի զա-  
րար խաղ կը կահշենիք: (Երգում է՝ չօթքով սրբելով սեն-  
եակը եւ շրջանածեւ պարելով).

Իմ սրտի դարդեր կը տամ (2)  
Մասսայ հովին, թող տանի վեր,  
Քեզ սիրող եարը ես եմ, }  
Կողբայ սարէն թող տանի վեր: } 2

### Տ Ե Ս Ւ Լ Բ.

ՆԱ ԵՒ ԹՈՐՈՍ.

ԹՈՐՈՍ. (Դաւթի երգից յետոյ իսկոյն ներս զալով)  
Զան, զան, աղա Դաւթիթ, զան...

ԴԱՒԹԻԹ. Վայ բէմուրատ, վեր թռայ... գնւ ես:  
ԹՈՐՈՍ. Հա, աղա Դաւթիթ, հա, հա, հա... էս մւրա աղէդ,  
ԴԱՒԹԻԹ. Ես ի՞նչ գիտեմ մւրա, հրէս կը գայ:  
ԹՈՐՈՍ. Չմտ կը գայ:  
ԴԱՒԹԻԹ. Հինդ օր էլ որ չգայ՝ այնումս չեմ դցի: Զան-  
էս գնացել ա, անաքանդը էնքան ուշունց ա տալի, որ անհէսար:  
Դրուստ քու աղբն մնց ջանավար ա. լաւ աղա մ:  
ԹՈՐՈՍ. Հոգի ա, հոգի: Եմ աղբն աղվակաթա, աղվակաթ,  
սոված վարժապետ հօ չի:  
ԴԱՒԹԻԹ. Աղվակաթը ի՞նչ ա որ, Թորոս, պողեր հօ չունի:  
ԹՈՐՈՍ. Հալրաթ որ ունի. աղվակաթն էն ա, որ եանի  
ինչքան էլ որ զողութիւն անես՝ կը պրծացնի հա, պողեր  
ունեցողից էլ բէթար ա:  
ԴԱՒԹԻԹ. Ո՞նց թէ:  
ԹՈՐՈՍ. Ընէց էլի՝ չի թողալ, որ զողին եա մարդա-  
պանին Սիրիր քշեն:  
ԴԱՒԹԻԹ. (Զարմանալով) է՛ է՛ է...  
ԹՈՐՈՍ. Բաս... ընենց էլ լիդու ունի անիծածը, ընէց  
զիր ու զալամ, որ նրա զրածը թէ քարի վրայ դնեա՝ էն սհաթը  
կը հալի:  
ԴԱՒԹԻԹ. էկ մվ ա տառւմ որ:  
ԹՈՐՈՍ. Ով պլտի ասիլ, ինքը: Ամա երևում ա, որ զրուստ  
ա, սազ օրը զեղլցիք մեր տան դունը իրար զլիսի կիտուած  
են, նրանք որ կան՝ աղիս կինդանի մատաղն են, ինդիրք ա,  
որ զրում ա, փող ա, որ պոկում ա:  
ԴԱՒԹԻԹ. Իմ աղբն էլ ա շատ զրամ. (ցոյց տալով  
սեղանի վրայի թղթերը) հրէս, տեսնում ես, զիս նրա զրա-  
ծըն ա, ամա ոս քրքրեցիր՝ զատ շես զանիլ, մէջը փուչ՝ օխտը  
հատիկ:

ԹՈՐՈՍ. Բաս... զիր եմ ասում, որ մի սհաթում 10—20  
մանէթ առնի: Ամսական, ով ա գիտում, 1000 մանէթին փողչասի:

ԴԱԼԻԹ. Եա... իմ աղջն՝ հաւատա երկու տարումն էլ 1000 մանէթի երես շտենի:

ԹՈՐՈՍ. Զարաթը երեք, չորս անգամ մեր տանը կասես հարսանիք ըլնի: Աղբէր, լաւ ազա ա... մէնակ հէնց կարտի փողը որ հաշուես՝ ամսական 30 մանէթ ինձ կարտի փող ա հասնում:

ԴԱԼԻԹ. Վայ իմ գլխին... կայ չըկայ՝ ամսական 5 մանէթն ա իմ ջանը:

ԹՈՐՈՍ. Ըհ, ես քու խելքին ինչ ասեմ... հէնց էդ:

ԴԱԼԻԹ. Լաւ, ինչ անեմ:

ԹՈՐՈՍ. Ի՞նչ պըտես անիլ... զուս արի, ես քեզ հըմար լաւ տեղ կը գտնեմ:

ԴԱԼԻԹ. Հղմրդ.

ԹՈՐՈՍ. Քու արել:

ԴԱԼԻԹ. Բաս զուս կը զամ.. կաց ամիսը թամամի...  
5 օր ա մնում:

ԹՈՐՈՍ. Օրհնած, մարդ էլ վարժապետի մօտ զուլուզ կանի, ին էլ հայ վարժապտի: Մ'ի մարդու, որ 5—6 խաղէին ունենայ, նա ինչ մարդ ա... հը... էս տարի էլ հօ չե՞ն զուս արել...

ԴԱԼԻԹ. Հըլա վախտը չի, Յունըսին, օրը զայ՝ բարին հետը: Դրաւստ ես ասում, աղբէր: Մ'ի մարդ որ իշարեռով ցախ առնի ու զրուանքով անձօխ, իմացի էլի... եղ ու պանրի հըմար էլ չեմ խօսում... զրանք էլ՝ ին ու գեօրայ իմացի:

ԹՈՐՈՍ. Ո՞վ ա իմանում, էղ բաներն էլ ինքն ա ասում:

ԴԱԼԻԹ. Բաս ինչ:

ԹՈՐՈՍ. Ախր զիտեմ է... էղ ջուռա մարդիկը կապէկ չեն սովացնի, ընենց տեղ գտնեմ քեզ հըմար, որ հէնց մէնակ բազարի առուարից 10 մանէթ ծըպըպացնես: Քուս արի, աղբէր, զուս արի... զլսիդ ճարը տես:

ԴԱԼԻԹ. Դուրս եմ զալու աղբէր.. Թորոս ջան, մի բան խնդրեմ:

ԹՈՐՈՍ. Ի՞նչ:

ԴԱԼԻԹ. Մարդու բան չ'ասեմ՝ մի խոստովանք ունիմ:

ԹՈՐՈՍ. Ի՞նչ խոստովահք:

ԴԱԼԻԹ. Ամօթ ա ասիլ.. ուզում եմ նշանուի:

ԹՈՐՈՍ. (Զարմացած) Ուզում ես նշանուի...

ԴԱԼԻԹ. Հա... ուզում եմ, հըմա, Թորոս ջան, փող չունիմ:

ԹՈՐՈՍ. (Աշ ձեռքով փակելով նըա ըերանը)

Սուս-ս-ս-ս... ձենդ կտրի... ամօթ ա...

ԴԱԼԻԹ. (Վեր թռչելով յետ է նայում) Հը... մի եկաւ որ:

ԹՈՐՈՍ. Ոչ ոք... ակա հօ դժուել չես...

ԴԱԼԻԹ. Ի՞նչ ա ըլել որ:

ԹՈՐՈՍ. Նշանածդ բաժինք ունի:

ԴԱԼԻԹ. Չէ:

ԹՈՐՈՍ. Տունի ունի:

ԴԱԼԻԹ. Չէ:

ԹՈՐՈՍ. Փող ունի:

ԴԱԼԻԹ. Չէ:

ԹՈՐՈՍ. Զուը քե... բաս ինչ ունի:

ԴԱԼԻԹ. Սիրուն ա:

ԹՈՐՈՍ. Դարդակ բան ա: Սիրունոթինը փոր չի կշտացնի:  
Մարդու կնիկը հէրիք ա, որ քու, քաշալ եա չօլախ չըլնի,  
ընդուց եղը թէկուզ ինչքան ուզում ա՝ վէշ ընի... մնացած  
ծր եօլա կը վնայ, թաք ըլի՝ փող ունենայ:

ԴԱԼԻԹ. Որ չունի՝ ինչ ուզեմ:

ԹՈՐՈՍ. Մ'ի առնի:

ԴԱԼԻԹ. Ակը սիրում եմ:

ԹՈՐՈՍ. Ղալաթ ես անում:

ԴԱԼԻԹ. Շատ լաւն ա է:

ԹՈՐՈՍ. Գլուխդ քարին ես տալի:

ԴԱԼԻԹ. Բօյնվ.. բուսաթնվ...

ԹՈՐՈՍ. Գլուխդ լիքն ա դարմանով: Հըմի զու զիտես...

ինձ էն ասա, ազիդ գալը մօտ մ՝ թէ չէ:

ԳԱԼԻԹ. Որդի որ ա՝ կը գայ, վախտն ա:

ԹՈՐՈՍ. Որ կը գայ, ասա աղէս ասում էր, տեղ չը գնալ,  
տանը իրան սպասի:

ԳԱԼԻԹ. ի՞նչ կայ որ:

ԹՈՐՈՍ. Տօ, ես ի՞նչ դիտեմ, քեզ պէս մի տուտոց էլ  
քու աղէն ա, նա էլ ա ուզում նշանուի: Իմ աղէն միջի մարդ  
ա դառել:

ԳԱԼԻԹ. (Զարմանալով) է՛է՛..

ԹՈՐՈՍ. Բայս... միթամ Մաթոս ազի աղջկանն ա ուզում,  
թէ տան՝ լաւ ա... ի՞նչ որ ասի՝ չը մոռանաս... (զնում է):

ԳԱԼԻԹ. Լաւ, շեմ մոռանայ. (առաջ զալով) գուս ա  
գալի դրսատ ա տօ... Աննման, հա Աննման..., հըմի...  
էպէս ասա է՛.. տեսել եմ, լաւ զադ ա... համա մեղք ա  
աղջիկը: (Մտածելով) Ետաշ, լաւ բան միտքս ընկաւ...  
վէդս ալշու ա կանգնելու... կաց հըլա գայ: Ես զրա ուշունց-  
ների հախիցը էնպէս գամ, որ ինքն էլ զալմանայ, . . . քանի  
հեղճացայ՝ էնքան գլխիս նստեց... Ազումի Թորոսի հօրք, որ  
չը գար՝ հօ չէի իմանայ (որսից լսում է Միհրանի երգի  
ձայնը):

## ՏԵՍԻԼ Գ.

Նև եի Միջրան.

ԳԱԼԻԹ. Ըհը՝, եկաւ, խազ ասելով ա գալի բաղդաւարը:  
Երի, արի ու տես... .

ՄԻՀՐԱՆ. (Ներս զալով ասաբում է քթի տակ՝ եր-  
գածի վերջին կտորը): Եյսեղ ես, Գաւիթ:

ԳԱԼԻԹ. 2է, ըստեղ չեմ:

ՄԻՀՐԱՆ. Այ զու անսպատան, բաս ի՞նչ ես, թէ այսպեղ չ'ես:

ԳԱԼԻԹ. Թէ, որ ըստեղ եմ, ազա, էլ ի՞նչ ես հարցնում:

ՄԻՀՐԱՆ. Բայց գա խօսակցութեան մի առանձին ոճ է,  
տխմար, դուքինա:

ԳԱԼԻԹ. (Կողմը) Սոկեց... գութին... էս մէկ, (նրան) գրուստ ա, ազա:

ՄԻՀՐԱՆ. Սրտայալութեան մի ձե, չուղա՛կ,  
ԳԱԼԻԹ. (Կողմը) Չուղակ... երկու... (նրան) շատ  
ուզիղ ա, ազա:

ՄԻՀՐԱՆ. Քեզ ասում եմ, առանձին դարձուածք, դուռա՛կ:

ԳԱԼԻԹ. (Կողմը) Երեք... գուք էլ համրեցէք... շատը  
գիաց՝ քիչը մնաց:

ՄԻՀՐԱՆ. Միշտ գործածելի անմեղ քաղաքականութիւն  
ստացած հարցմունք, պաղէց:

ԳԱԼԻԹ. (Կողմը) Չորս... չէ... մի գութին պըտի  
թամամի:

ՄԻՀՐԱՆ. Սարի արջ տեղովդ ինձ վրայ ծիծաղմամ ես,  
ի՞նչ է, սկասինա:

ԳԱԼԻԹ. (Կողմը) Եղ չէի լսել... ասա, տան... (նրան) ի՞նչ աղա...:

ՄԻՀՐԱՆ. մալչա՛տ:

ԳԱԼԻԹ. (Կողմը) Գլուխս մեռնի՝ թէ հասկացայ. համա  
երեւմ ա շատ փիս խօսք ա:

ՄԻՀՐԱՆ. Պրոկլետատայեա դուշա՛:

ԳԱԼԻԹ. (Կողմը) Էհը՝ զուշա, որ խաչիցն էր, քազցրացաւ,  
հոգի ջան ա ասում, (նրան) բաս ի՞նչ եմ, թէ հոգի ջան չեմ, ազա:

ՄԻՀՐԱՆ. Գարձեալ սուտ էշ ձեացար... վօն ատսիւդա,  
մերզաւէց... վօն... դներս:

ԳԱԼԻԹ. Էլ ի՞նչ ես չարանում, ազա. վօն ես ուզում,  
վօն կանեմ, էլի: (Դուրս է զնում եւ յետ դառնում) հաշիւս  
թամզացրա:

ՄԻՀՐԱՆ. (Կողմը) Ջատ վատ տեղից բռնեց անիծեալը,

Կրկու ամիս է՝ փող չեմ ստացել, (Նրան) մոք ես գնում խելօք.  
կաց, կաց, Դաւիթ, էլ չեմ բարկանայ:  
ԴԱ.Ի.Ի.Թ. 2է, պլատի զնամ... հաշիւս:  
ՄԻՀՐԱՆ. Գժութիւն մի անի:  
ԴԱ.Ի.Ի.Թ. Վալլահ, զնալու եմ, աղա, հաշիւս ...  
ՄԻՀՐԱՆ. Ուր ես գնում ախր:  
ԴԱ.Ի.Ի.Թ. Տեղ շատ կայ... ըսկի շընի՛ կեթամ Մաթոս  
աղոնց տուն... հաշիւս...  
ՄԻՀՐԱՆ. Մաթոս աղոնց տուն, (Կողմը) այ քեզ խայ-  
տառակութիւն:  
ԴԱ.Ի.Ի.Թ. չա: Քանի անգամ ա ինձ կանչում ա, համա ես  
չէի ուզում գնայ, ամսական էլ 10 մանէթ ա տալի, (Կողմը)  
պոշով սուտ ա հա... (Նրան) աղա հաշիւս...  
ՄԻՀՐԱՆ. Արի, արի նա 10 մանէթ տուող չէ, հանար  
էի տնում:  
ԴԱ.Ի.Ի.Թ. էլ ի՞նչ հանար, հախս տուր, ես գնում եմ  
(ուզում է զնալ):  
ՄԻՀՐԱՆ. Քեզ ասում եմ յետ արի, սարսաղութիւն մի անի:  
ԴԱ.Ի.Ի.Թ. 2է աղա, 10 մանէթ ա... կը տաս՝ կը մնամ,  
թէ չէ գնում եմ:  
ՄԻՀՐԱՆ. Գժուեցար, ի՞նչ է...  
ԴԱ.Ի.Ի.Թ. Սրանից դէնը ի՞նչ կուզես՝ ասա, աղա, թէ զիժ  
եմ, հալրաթ Մաթոս աղէն էլ չի պահի:  
ՄԻՀՐԱՆ. Ես քեզ ասում եմ յետ արի, Դաւիթ:  
ԴԱ.Ի.Ի.Թ. Ես էլ ասում եմ, մին թուման կը տաս՝ կը զամ:  
ՄԻՀՐԱՆ. 2է որ շեմ կարող տալ:  
ԴԱ.Ի.Ի.Թ. Դու զիտես, աղա, ի՞նձ ձեւը չի տայ:  
ՄԻՀՐԱՆ. (Կողմը) Ի՞նչ անեմ... (Նրան) լաւ, Դաւիթ,  
չեմ ուզում արի ուրիշ տեղ տամ քեզ, ի՞նչքան շը լինի՛ էլի իմ  
Դաւիթն ես... Մաթոս աղի մօտ մի զնա, մեղք ես, կըխոս-  
տանայ՝ բայց չի տայ, մէկ էլ որ՝ շատ բարկացկոտ և ծեծող մարդ է:

ԴԱ.Ի.Ի.Թ. (Կողմը) 2էս կարայ խարի (Նրան) 2ի տայ եա  
կը ծեծի՝ նրա մօտից էլ զուս կը զամ:  
ՄԻՀՐԱՆ. (Կողմը) 2ի յաշողում... պէտք է պահել,  
մինչև զործը վերջանայ, (Նրան) լաւ, մօտ արի, տալիս եմ:  
ԴԱ.Ի.Ի.Թ. 2եմ զալի, աղա:  
ՄԻՀՐԱՆ. Մօտ արի քեզ ասում եմ:  
ԴԱ.Ի.Ի.Թ. Աղա վախում եմ ծեծես:  
ՄԻՀՐԱՆ. Էլի օյինբազութիւնդ բռնեց. չեմ ծեծի, մօտ  
արի, տօ բալվան:  
ԴԱ.Ի.Ի.Թ. Բալվան չէ, աղա, կուզես հայվան ասա, ի՞նձ հըմար  
մէկ ա... մինչեւ 10 մանէթ շրաս՝ մօտ եկողը շեմ:  
ՄԻՀՐԱՆ. Տօ, տալիս եմ էլի:  
ԴԱ.Ի.Ի.Թ. 2է, աղա, մինչև չընանես՝ չեմ զայ:  
ՄԻՀՐԱՆ. (Կողմը) Տէր Աստուած, (Հանելով) ահա, էս  
էլ հանեցի:  
ԴԱ.Ի.Ի.Թ. Տուր դնեմ ջէ՛բս...  
ՄԻՀՐԱՆ. Առ անիծուած, հարամ լինի գլխիդ (վողը  
շպրտում է դէպի նա):  
ԴԱ.Ի.Ի.Թ. Որ հարամ ա ըլնելու, աղա, ըսկի էլ շեմ առնում,  
գնում եմ. (ուզում է զնալ):  
ՄԻՀՐԱՆ. (Կողմը) Այժմ էլ նազ է անում անիծածը,  
(Նրան) լաւ, վեր առ ու մօտ արի:  
ԴԱ.Ի.Ի.Թ. Մինչև չասես թէ՛ Դաւիթ, հալալ ըլնի, փողերն  
առ ու մօտ արի՝ չեմ առնի ու չեմ զայ, աղա:  
ՄԻՀՐԱՆ. (Կողմը) Տեսնում էք այս լրբին. (Նրան) հալալ  
լինի, Դաւիթ, փողերն առ ու մօտ արի:  
ԴԱ.Ի.Ի.Թ. Այ հըմի բան շունիմ ասելաւ (վողը առնում  
զըպանն է զնում) հըմի կը զամ (մօտենում է) հըմի ի՞նչքան  
կուզես՝ ծեծի, աղա, հալալ ըլնի ի՞նձ էլ՝ քեզ էլ:  
ՄԻՀՐԱՆ. (Ականջից հանաքով բռնելով) Ասա տեսնեմ,  
սիրելի Դաւիթ, Մաթոս աղին դու վաղմաց ես ճանաչում:

ԴԱԻԻԹ. Ո՞նց չէ, աղա, շատ վազուց, (կողմն) ես մեռ-  
նիմ թէ ըսկի երեսը տեսել եմ:  
ՄԻՀՐԱՆ. Քանի տղայ ունի, Դաւիթ:  
ԴԱԻԻԹ. Ես ասեմ աղայ շունի, աղա:  
ՄԻՀՐԱՆ. Աղջիկ էլ չունի:  
ԴԱԻԻԹ. Աղջիկ ունի, աղա... հա, հա, մնց չէ. ունի:  
ՄԻՀՐԱՆ. Քանի տարեկան կր լինի:  
ԴԱԻԻԹ. Քանի... ես ի՞նչ պիտեմ, աղա:  
ՄԻՀՐԱՆ. Անունն ի՞նչ է:  
ԴԱԻԻԹ. Վալահ խարար չեմ, (կողմն) ասա սուտը  
գետինը մտնի:  
ՄԻՀՐԱՆ. Այս լաւ է, որ բանից խարար չէ (Նրան) սի-  
րելի Դաւիթ, մի բան հարցնեմ՝ զբուսն ասա: Թէ որ ինձ  
համար Մատթէոս աղան հարցնելու լինի թէ ի՞նչպէս մարդ է,  
խելք ի՞նչ է կարում, ես ի՞նչպէս մարդ եմ, Դաւիթ:  
ԴԱԻԻԹ. Ի՞նչպէս մարդ ես...  
ՄԻՀՐԱՆ. Հա, ի՞նչ կասես:  
ԴԱԻԻԹ. Ի՞նչ կասեմ...  
ՄԻՀՐԱՆ. Եյս, ի՞նչ կասես:  
ԴԱԻԻԹ. Կասեմ ես չեմ զիտի, իրանից հարցըրու:  
ՄԻՀՐԱՆ. Այ գու եարամաղ..., էլի սկսեցիր քո մասիս-  
լութիւնները. չէ, զրուստն ասիր. ի՞նչ կասես:  
ԴԱԻԻԹ. Ի՞նչ պլտի ասեմ, դրուստը կասեմ էլի:  
ՄԻՀՐԱՆ. Դրուստը մըն է:  
ԴԱԻԻԹ. Դրուստն էս ա, աղա, որ կասեմ լաւ մարդ ա,  
ամա...  
ՄԻՀՐԱՆ. Ամա ի՞նչ, ասա, մի ամաշի:  
ԴԱԻԻԹ. Գիտես էլի, աղա, կասեմ շատ ա ուշունց տալի:  
ՄԻՀՐԱՆ. (Գլուխն հանաքով խփելով) Տօ փառչ, իրքի  
թէ այդ է դրուստը:  
ԴԱԻԻԹ. Եանի սուտ ա, աղա:

ՄԻՀՐԱՆ. Լաւ, լաւ, դիտեմ որ հանաք ես անում, թէ  
որ հարցնելու լինի՝ ի հարկէ կը գովես:  
ԴԱԻԻԹ. Ել խօսք կայ, աղա, որ կը գովեմ. որ շը գովեմ  
բաս լեզուս չի պապանձուի:  
ՄԻՀՐԱՆ. Սպրիս, սիրեմ՝ զըեղ... տեսնում եմ, որ լաւ  
տղայ ես:  
ԴԱԻԻԹ. (կողմն) Կըկակես՝ կուտես, (Նրան) խօսք կայ,  
աղա, որ լաւ տղայ եմ: Դրուստքիշ էր մնում, թէ մոռանայի...  
ՄԻՀՐԱՆ. Ի՞նչը...  
ԴԱԻԻԹ. Յոլակ աղոնց զեազէն էր էկել, աղա:  
ՄԻՀՐԱՆ. Ի՞նչ էր ասում:  
ԴԱԻԻԹ. Յոլակ աղէն խարար էր արել, որ տանը մնաս,  
ինքը գալու ա:  
ՄԻՀՐԱՆ. Ճմաւ կը գայ:  
ԴԱԻԻԹ. Որտեղ որ ա՝ կը գայ աղա:  
ՄԻՀՐԱՆ. Որ էղպէս է՝ դա վնա փողացում սպասիր և  
երբ կը տեսնես, թէ գալիս է՝ իսկոյն վաղիր ինձ իմաց արա:  
ԴԱԻԻԹ. Լաւ, աղա (զնում է):

### ՏԵՍԻԼ Պ.

ՄԻՀՐԱՆ (ժենակ)

Կեցցէ իմ Յոլակը... վերջապէս կատարել է իր խօսքը:  
Բայց անսպիտան Դաւիթը քիշ էր մնում ձեռքից դուրս պրծնի...  
Լաւ էր չյաջողեց, թէկ տուժեցի, 5-ի տեղ՝ 10 ըուբի տուի,  
բայց վնաս շունի, միայն թէ գործս յաջողի, Աննմանից չըզըր-  
կուիմ: Ինչու պէտք է երիտասարդ սրտերը ուզգակի միմեանց  
հետ յարաբերութիւն չունենան առանց միջնորդի, որ այսօր ես  
ել շրկարօտեմ Յոլակի պէս կեղեքիշ մի փաստաբանի, բայց  
ստիպուած եմ ակամայ նրա միջնորդութեան դիմել մի անմեղ  
և հրեշտականման արարած աղատելու մի խաւարամիտ ծնողի

ձեռքից, որպիսին Մատթէոս աղան է—իմ ապագայ աները: Եթէ մեր մէջ բոլոր վիճած հայրերն ու մայրերը մի զլաւս ունենային՝ առանց խղճահարութեան մի սրի հարուածով կըթրոցնէի, որ նոցա տառապեալ աղջկերը մի անգամից ադատուէին բռնակալ հրէջներից: 'Ի դէպ. այս երեկոյ այդ տէման էի որոնում և ձեռաց մի զողարիկ ոտանաւոր զերեցի, տեսնես էլ որտեղ է զիել մեր խելօք Դաւիթը. (որոնում է սեղանի վրայ): Հազար զու ասա, թէ թղթելս մի խառնի, թէ բանաստեղծի ցրիւ եկած թղթերը, նրա սեղանի զարդն են կազմում, բայց ումն ես ասում, կամ ի՞նչ ես պահանջում ահտաշ դիւզացուց... Դտայ վերջապէս... (կալդում է):

Քանի, ասացէք. սիրուն աղջիկներ,  
Տառ ու մայրերիդ, մօրքուր, հայրերիդ,  
Հլու հպատակ՝ խամրիք, թուոմիք,  
Զէ տեսնում ոչ ոք ձեր ջերմ արցունքներ:  
  
Ճռճռան զրշիդ պօէտ, զու ընկեր,  
Երկարյիր սուրը բոնիր քու ձեռքում,  
Ազ ու ձախ բուռն ուժվին հարուածով,  
Սնջատէ մարմնից քաւիթառ զլուխներ:

Այս, հողը փաղուց արդէն պատրաստ է, կրպայ անպատճառ այդ թարմ հոսանքը: Ինձ պէս մտածողների թիւը մի մեծ բանակ է կազմում այժմ: Բայց... (որսից լսում են Դաւիթի քայլերի ծայնը):

### ՏԵՍԻԼ. Ե.

ՆԱ. ԵՒ ԴԱԻԹ.

ԴԱԻԹ. (Յանկարծ ներս է ընկնում՝ հետարով): Եկաւ, աղա ջան, եկաւ:

ՄԻՀՐԱՆ. Հա:

ԴԱԻԹ. Հետի էլ մի բօյով աղջիկ, աղա ջան:

ՄԻՀՐԱՆ. Աղջիկ (կողմը) անպատճառ նա կը լինի.

(Նրան) գէն, շտապիր, կարզի բերենք այստեղ. ամօթ է. Կազում են իրար անցնել եւ շտապ-շտապ կարզի բերել սենեակը. Միհրանը սեղանի երեսը, իսկ Դաւիթը աթոռները, որի ժամանակ երկուան էլ շփոթութիւնից զանազան առարկաներ են վայր ծգում: զիրք, մոմակալ եւ այլն, կարզի բերելիս՝ շտատ շուտ տեղերս փոխում են, Միհրանը անցնում է աթոռներին, իսկ Դաւիթը գրասեղանին):

ԴԱԻԹ. Հըլա հեռու են, աղա ջան, մի վախիլ, քուշի ծէրին են:

ՄԻՀՐԱՆ. Պլծիր քեզ ասում եմ, պաղէց:

ԴԱԻԹ. (կողմը) Ասա ի՞նչ պաղէցի վախտ ես զտել. (Նրան) էս ա պլծայ, աղա ջան, մի բարկանայ:

ՄԻՀՐԱՆ. Տօ փնչ կենդանի, պլծիր է՛ք... շարժուիր...

ԴԱԻԹ. Վոազում եմ, աղա, վոազում. (կողմը) Թունդ քացազը իր ամանը կը ճարացնի. (ծաղկամանը, որ շտապ սրբում էր վայր է ծգում ու կոտրում). որ ասում էի էս էլ քեզ շուտ արա:

ՄԻՀՐԱՆ. Այ քնուանաս զու, քուանաս, սեղանիս միակ զարդն էլ կոտրեցիր: Հաւաքիր, հաւաքիր կտորները, շնտ, ոտ անիծած, թէ չէ զլուխտ ջարդեցի հա:

ԴԱԻԹ. (կողմը, հասաքելով) Ի՞նչ, զլուխս շուշից աշնած, որ ջարդիս, (Նրան) վնաս չունի աղա, չարը խափանեց:

ՄԻՀՐԱՆ. Խափանուիս ու կործանուիս զու... կաց զան ու գնան՝ ես զիտեմ ու զոմ:

ԴԱԻԹ. (կողմը) Հա, թէ որ մնամ:

ՄԻՀՐԱՆ. Դներս մտիկ տուր, տես եկան թէ չէ. (Դաւիթը դուրս է զնում.) այ քեզ խայտառակութիւն... հիմի զան ու էսպէս տեսնեն՝ ի՞նչ կասեն... ի՞նչ եղաւ էդ անիծածը



(Դաւիթը ներս է զայխա), հը, եկան:

ԴԱՒԻԹ. Եկան, աղա, համա (յետ յետ գնալով):

ՄԻՀՐԱՆ. Ի՞նչ ես յետ յետ գնում, տօ անիծուած:

ԴԱՒԻԹ. (Ղողմշ) չըմի որ հաստատ պլտի զեզստի.  
(նըան) աղա ջան, եանդլիշ եմ, եկովը Յոլակ աղի նման էր,  
համա ինքը չէր, աղջիկն էլ մի ռսի աղջիկ էր... անցան զնացին:

ՄԻՀՐԱՆ. (Յարձակուելով վրան). Դու դեռ շատ օյին  
պիտի բերես իմ զլիսին... գնուրս, սարի արջ, (մի քանի հատ  
խփում է), էլ աջրիս չերեաս:

ԴԱՒԻԹ. Աման, աղա ջան, էլ չեմ անի, ես մեղայ Աստծու.  
(փախչում է դուրս եւ դիպչում է ներս եկող Յոլակին):

### ՏԵՍԻԼ. Զ.

ՆԱ ԵՒ ՅՈԼԱԿ, ԻՍԿ ՎԵՐՖԲ, ԴԱՒԻԹ.

ՅՈԼԱԿ. Կամաց, տօ հայվարտ. . ի՞նչ է պատահել, ի՞նչ  
տուրուգմբոց է:

ՄԻՀՐԱՆ. Ոչինչ, ոչինչ... հը, աղայ ես՝ թէ աղջիկ:  
ՅՈԼԱԿ. Ոչ մէկն էլ չեմ:

ՄԻՀՐԱՆ. Վահ, միթէ դեռ չես զնացիլ:

ՅՈԼԱԿ. Գնալը զնացիլ եմ, բայց...

ՄԻՀՐԱՆ. Բայց....

ՅՈԼԱԿ. Բայց... (ծիծաղում է) հա, հա, հա, հա...

ՄԻՀՐԱՆ. չը... ի՞նչ ես ծիծաղում:

ՅՈԼԱԿ. Եկը ի՞նչպէս չը ծիծաղեմ, երբ որ, հա, հա,  
հա... ծիծաղելի է... հա, հա, հա, հա....

ՄԻՀՐԱՆ. 2ը լինի չի յաջողում:

ՅՈԼԱԿ. Յաջողելը կը յաջողի, եթէ միայն... հա, հա,  
հա . . .

ՄԻՀՐԱՆ. Եթէ միայն ի՞նչ, ախր է... ինձ սպանելու  
հալ ունիս,

ՅՈԼԱԿ. Եթէ միայն... հա, հա, հա... երկայն մազեր  
թողնես, հա, հա, հա... բանաստեղծական մազեր... հա,  
հա, հա... աղջիկը այդ է պահանջում հա, հա, հա...

ՄԻՀՐԱՆ. Եւ իրաւունք ունի... որովհետեւ...

ՅՈԼԱԿ. Որովհետեւ ի՞նչ, հա, հա, հա...

ՄԻՀՐԱՆ. Որովհետեւ, ասում եմ, աշխարհիս մէջ բոլոր  
ընտիր բանաստեղծները, գեղարուեստագէտները և վիպանն-  
ները երկայն մազեր են ունեցել, ինչպէս օրինակ (հետզհետէ  
վրայ տալով) չայնին. Բայրօնը, Շիլլերը, Շերսովիրը, Պուշ-  
կինը, Ալֆօնս Գօվին, Ալեքսանդր Դիւմին, Տալիտովը, (այս  
մըջոցին Յոլակը նրա յիշած անոնները մատները վրայ  
համարում է շոտ շոտ):

ՅՈԼԱԿ. (Յանկարծ ընդմիջելով) Վիկտոր Հիւլօն:

ՄԻՀՐԱՆ. Չէ, նա վերջում քաշալ էր:

ՅՈԼԱԿ. Որովհետեւ ծերացել էր... ասել է՝ թէ պատ-  
րաստ ես:

ՄԻՀՐԱՆ. Անհմանիս խսնարհ ծառան եմ:

ՅՈԼԱԿ. Եթէ այդպէս է նա քանի է:

ՄԻՀՐԱՆ. Քո չնորհիւ, այն նա իմն է. միայն քն չնորհիւ,  
Յոլակ:

ՅՈԼԱԿ. Ինչո՞ւ իմ չնորհիւ և ոչ քո բանաստեղծութեան,  
որ միշտ և անդադար կարգում է նա:

ՄԻՀՐԱՆ. Ո՛չ, ո՛չ, քո չնորհիւ միայն: Քո միջնորդու-  
թիմը, որ չը լինէր...

ՅՈԼԱԿ. Այդ իմ պարտին էր:

ՄԻՀՐԱՆ. Մ'ծ վեհանձնութիւն քո կողմից:

ՅՈԼԱԿ. Ի՞նչ վեհանձնութիւն:

ՄԻՀՐԱՆ. Օտտ վսեմ... ես ամաշում եմ... ես մեղաւոր եմ:

ՅՈԼԱԿ. 2եմ հասկանում:

**ՄիջրԱՆ.** Բայց ես զիտեմ, թէ ես ինքս էի, որ լրագըր-ներում քեզ շարունակ պախարակում էի, ժողովրդի տղրուկ հռչակելով, վամպիր անուանելով և այլն. բայց այսօր իմ բոլոր արածներիս դէմ դու վճարում ես անսահման վեհանձնութեամբ... վեհանձնութիւն, որից զուրկ եմ ես զլխովին, այն, զուրկ: Բայց բանաստեղծական վառ երեակոյութիւնու է մեզաւոր... կը քաւեմ, այն, կը քաւեմ ես իմ հին մեղքերը... դու վամպիր չես, դու ժողովրդի շր ճանաշած բարերար հայրն ես, դու Աստուածանից ուզարկուած միակ պաշտպանն ես մեր տառապեալ ժողովրդի, որ...

**ՅՈՒԱԿ.** (Կողմը) Մկնեց. (Նրան) ի՞նչ ես ասում, Միհրան:

**ՄիջրԱՆ.** Ես երեակայում էի, որ իմ թշնամիների մէջ դու ես առաջինը... ախ, ուր էր թէ՝ ես կարկամէի այս բողէիս: ՅՈՒԱԿ. Ի՞նչ աւելորդ խօսքեր են:

**ՄիջրԱՆ.** Ո՛չ, սիրելի բարեկամ, ստից ցվլուի մեզաւոր եմ. (ընկնում է նրա ոտները) ներիր ինձ, ներիր, հրեշտակի իմ, ես քեզ զաւածանել եմ, ամբաստանել... այսուհետեւ ես կը հռչակեմ քո անոնը իմ բանաստեղծութիւնների մէջ... դու կը լինիս իմ իդէալը մինչհ կեանքիս վերջը:

**ՅՈՒԱԿ.** Վ'եր կաց, մեր կաց, Միհրան, ամօթ է:

**ՄիջրԱՆ.** (Վերկենալով) Այն, ամօթ, բիւր ամօթ ինձ համար, որ չը կարողացայ ճանաշել իմ մոտերիմ բարեկամի պարզ ու անխարդախ սիրտը. (Կըկեն ընկնելով նրա ոտները) աղաշում եմ, Յոլակ, ներիր ինձ... ներիր քո անառակ եղբօրը:

**ՅՈՒԱԿ.** (Վերկացնելով) Բաւական է, բաւական, եթէ դու այդպիսի բաներ ես անելու, կերթամ, կը հեռանամ:

**ՄիջրԱՆ.** Իսկ ես ինձ կը մահացնեմ, եթէ չը ներես:

**ՅՈՒԱԿ.** Ես վազնեց եմ ներել... մոռացել անցեալը:

**ՄիջրԱՆ.** Ո՛չ, օրինակելի մարդ, անզուզական բարերար... Անմանիցս երիցս աննման բարեկամ:

**ՅՈՒԱԿ.** Լաւ, բաւական է, (Կողմը) ժամանակ է սկսելու.

(Նրան) առ, առ, այս նամակը, կարդա և պատասխանը պատրաստիր:... Փօքր յետոյ ես կը զամ և կը տանեմ յանձնելու օրիորդին, մնաս բարեաւ:

**ՄԻՃՐԱՆ.** Դու նամակ էլ ես բերել օրիորդից: Ո՛չ, բազմապատկուեցան բանաստեղծական խանդի ու աւիւնն իմ մէջ... զողովրդիկ տէմաներն իրար յաջորդում են մտքիս մէջ... բայց ուշ ու միտքս ինձ կարծես պիտի զաւածանեն. (զլուխը բռնելով) ես... ես... ուշաթափում եմ, Յոլակ... (ընկնելով նրա վրայ) կորցնում եմ ինձ:

**ՅՈՒԱԿ.** Պօհտ, մի շփոթուիր, մի կորցնիր քեզ... ղգաստացիր, եթէ ոչ՝ ամեն ինչ կորած է:

**ՄԻՃՐԱՆ.** Այն, վտանգաւոր գրութիւն... նախանձելի և աննախանձելի... ցանկալի և ոչ ցանկալի...

**ՅՈՒԱԿ.** Ուշրի եկ, Միհրան, պատրաստիր, նա անհամբեր սպասում է, ցտեսութիւն, ես զնում եմ:

**ՄԻՃՐԱՆ.** Բայց ո՛չ, կաց, Յոլակս, կաց, ես խկոյն պատասխանը կը պատրաստեմ:

**ՅՈՒԱԿ.** Ո՛չ, արգելք չեմ ուզում լինել: Այդպիսի ժամանակ բանաստեղծը պէտք է միայնութիւն որոնէ:

**ՄԻՃՐԱՆ.** Արգարի:

**ՅՈՒԱԿ.** Ուրեմն ցտեսութիւն:

**ՄԻՃՐԱՆ.** Բայց սպասիր կարդամ քո ներկայութեամբ:

**ՅՈՒԱԿ.** Քառ լիցի, ես իրաւոնք չեմ համարում ինձ:

**ՄԻՃՐԱՆ.** Ես ինպում եմ:

**ՅՈՒԱԿ.** Չեմ կարող:

**ՄԻՃՐԱՆ.** Ազերսում եմ:

**ՅՈՒԱԿ.** Իզմուր:

**ՄԻՃՐԱՆ.** Պաղատում եմ:

**ՅՈՒԱԿ.** Երբէք:

**ՄԻՃՐԱՆ.** Ոտքերդ ընկած... (ուզում է չոքել):

ՅՈՒՅԱ. (Չը թողնելով) Եթէ զարձիալ կը շարուհակե՞ս...  
 ՄԻՀՐԱՆ. Կրկին կը խնդրեմ:  
 ՅՈՒՅԱ. Կը նեղանամ:  
 ՄԻՀՐԱՆ. Կրկին կը պաղատեմ, կ'աղաշեմ, կ'արտասուեմ,  
 կը լամ, կը փարփառիք:  
 ՅՈՒՅԱ. Որ ի՞նչ անեմ:  
 ՄԻՀՐԱՆ. Որ մնաս...  
 ՅՈՒՅԱ. Ինձ մօտ կարգաս...  
 ՄԻՀՐԱՆ. Այս:  
 ՅՈՒՅԱ. Ո՞չ, ուրիշի գաղտնիքների մէջ մտնելու սովորութիւն չունիմ, եթէ մնամ այլս չեմ զալ յաւիտեան:  
 ՄԻՀՐԱՆ. Անողոքելի՛ Յոլակ, գնահ ուրիմն. այն, գնահ,  
 բայց շուտ եկ:  
 ՅՈՒՅԱ. Ասացի որ կը զամ:  
 ՄԻՀՐԱՆ. Այս, շնոր եկ, ես անհամբեր կըսպասեմ:  
 ՅՈՒՅԱ. Սպասիլ:  
 ՄԻՀՐԱՆ. Մի ժամից յետոյ պատբաստ կը լինի:  
 ՅՈՒՅԱ. Լաւ, կը զամ:  
 ՄԻՀՐԱՆ. Այս ի՞նչ եմ ասում, երեք քառորդ ժամից յետոյ:  
 ՅՈՒՅԱ. Այստեղ կը լինիմ:  
 ՄԻՀՐԱՆ. Կէս ժամից:  
 ՅՈՒՅԱ. Կէս ժամից:  
 ՄԻՀՐԱՆ. Քառորդից յետոյ:  
 ՅՈՒՅԱ. Քառորդից յետոյ կը զամ:  
 ՄԻՀՐԱՆ. Տասն րոպէ միայն՝ և ինձ բաւական է:  
 ՅՈՒՅԱ. Աւելի լաւ:  
 ՄԻՀՐԱՆ. Հինգ րոպէն էլ հերիք է:  
 ՅՈՒՅԱ. Եւս տռաւել շատ լաւ:  
 ՄԻՀՐԱՆ. Թէկուզ մի րոպէից յետոյ:  
 ՅՈՒՅԱ. Ուրիմն իսկայն յետ կը զամ, ցանութիւն  
 (գնում է):

ՄԻՀՐԱՆ. (Յետելից) Գիացբը, իսկայն, իսկայն յետ արի,  
 շուշանաս:  
 ՅՈՒՅԱ. (Գոնից) Լաւ, չեմ ուշանայ, միւս սենեակում  
 կըսպասեմ:  
 ՄԻՀՐԱՆ. (Նամակը ըոնում է եւ սկսում է կարդալ)  
 «Սիրելի Միհրան, մօտիկ ապագայի ընկեր»:  
 Ո՞չ, ի՞նչ զսութիկ խօսքեր, «Նման զնմանն սիրէ», ես բանաստեղծ, իսկ նա բանաստեղծուհի, երեակայումնեմ, թէ ի՞նչ կրակի կտոր է լինելու մեր ապագայ ժառանգը կամ ժառանգուհին:  
 (շարունակում է) «Մեր երկուքիս անդուզական բարեկամ Ցոլակի ձեռքով ուղարկելով նամակս, նրա բերտնով էլ յայտնում եմ միակ ցանկութիւնս ու պայմանս...»:  
 ՅՈՒՅԱ. (Ներս զալով) Ահա և ես:  
 ՄԻՀՐԱՆ. Բարով, հազար բարի, իսկայն, իսկայն:  
 ՅՈՒՅԱ. Պատասխանիլ:  
 ՄԻՀՐԱՆ. Այս բոպէին, կաց նամակը վերջացնեմ:  
 ՅՈՒՅԱ. Ուրիմն ցանութիւն (գնում է):  
 ՄԻՀՐԱՆ. Իսկայն, իսկայն, (շարունակելով) «Առաջարկութիւնդ կը յարգեմ, եթէ պայմանս չատարես: Կը ցանկանայի որ բանաստեղծական հանճարիդ ու տաղանդիդ համապատասխանէին նաև հերարձակ և զանգրահեր բանաստեղծական զուխդ: Անհամբեր սպասելով երկտողիս պատասխանին, մնամ միշտ բոյդ Անման»:  
 (Համբուրելավ նամակը) Անպատճառ, սիրելի Անմանս, անպատճառ:  
 ՅՈՒՅԱ. (Ներս զալով) Պատրաստ է:  
 ՄԻՀՐԱՆ. Ո՞չ, գմտ ես, իսկայն, իսկայն...  
 ՅՈՒՅԱ. Մի բոպէից շատ անցաւ:  
 ՄԻՀՐԱՆ. Ներիր, կաղաշեմ, այս բոպէիս, այս վայրկենիս:  
 ՅՈՒՅԱ. Ցանութիւն, (գնում է):  
 ՄԻՀՐԱՆ. (Յետելից) Այս, ցանութիւն, բայց շատ շուշանաս... հինգ րոպէից յետոյ: Պէտք է շտապել. (Նստում է

զբասեղանի մօտ): Աննման և Միհրան... երկուսն էլ նոյնահշիւն, ոհ, բնութեան հրաշալիք... ոհ բանասահղծութիւն... վու մուսաների քաղցրահնչիւն մեղեդի, ահա զրիչս առնում եմ... օրհնիր իմ վաստակս և թող շափաղանց բուռն խանգս իւր բաժինը հանէ նախ Յոլակիս—իսկ ապա հոգւոյս հատորին—զեղեցկուհների թաղն ու պստի Աննմանիս... երգում է):

Ընկեր եմ տսում, աստուածավախ,  
ճշմարիտ ընկեր և այն:

ՅՈՒ.Կ. (Ներս զայռվ) Այժմ, իհարկէ, կարող եմ ստանալ:  
ՄԻՀՐԱՆ. Պատասխանը...

ՅՈՒ.Կ. Այն, 5 բոպէն անցաւ:

ՄԻՀՐԱՆ. Այս, ներիր, սիրելի բարեկամ, բոլորովին յափշտակուած... հինց այժմ կը սկսեմ պատասխանել: 10 բոպէից յետոյ պատրաստ կը լինի, (Յոլակը զնում է): Սկսենք, ամօթ է, (սկսում է գրել, բարձրածայն արտասանելով զրածը).

«Զօն առ հատընտիր և անզուգական ընկեր իմ Յոլակ».

Հիանալի զուրս եկաւ: Յոլակ... ակ... ակ... այն, ակով վերջացնենիք: Տեսնենիք ի՞նչ խօսքեր կան, ճմուլով ճակատը եկան, իրար յետից, եկան... փայլակ, արեգակ, լուսնեակ, դիմակ, դմակ, դանակ, թանաք. արդանակ, զլանակ, մօծակ, կարկանդակ, Աշտարակ, աշտանակ, վտակ, գետակ, առուակ, սահնակ, աւագակ, մնականակ, աւանակ... բաւական է սկսեմ... (ցածր եղանակում է «Մեր հայրենիքի» եղանակը եւ ապա գրում շարադրածը՝ կարդալով բարձրածայն).

Յոլակ, դէմքդ փայլակ Յոլակ,  
Փայլում ինչպէս արեգակ.

Երեսիս չեմ զըրել զիմակ,  
ինձ չը մորթես անդանակ:  
Ջէրի... հիանալիէ, բայց բաւական չէ, սկսենիք, Երկրորդ տունը.—

Մեղայ, բիւր մեղայ, Յոլակ ջան,  
Յոլքիդ մատաղ է Միհրան,  
Որին տուիր իւր Աննման,  
Մեղայ, մեղայ, Յոլակ ջան:

Հուր և կրակ թափուեց զբշիցս մի բոպէում: Այժմ Աննմանիս անունով, բայց անպատճառ, «Երբ ալեկօծի» եղանակով, այն, այն, իր սիրած երգն է: Օ՛հ ուրեմն ընդ առաջ շարժիք, ով իմ զրիշ պատուական:

Երբ, Աննման զու զեղեցիկ,  
իմ մաղերը երկարի,  
Արգելքները վերանալով  
Սիրտդ ինձի պատկանի:

Անսպասելի յառաջադիմութիւն... երգենիք, տեսնենիք ի՞նչպէս է զուրս զալիս (սկսում է երգել, մնանում է Յոլակը):

ՅՈՒ.Կ. Այժմ յուսամ թէ...

ՄԻՀՐԱՆ. Պատ ժամանակ եկար, իսկայն, Յոլակ ջան...  
Քիշ էլ սպասիր ու կաւարտեմ, յատուկ ներսպութիւն...

ՅՈՒ.Կ. Ոշինչ, ոշինչ, շալանակիր:

ՄԻՀՐԱՆ. Այն, Յոլակ, 15 բոպէից յետոյ պատրաստ կը լինի... բիւր անզամ ներսպութիւն (Յոլակը զնում է) որտեղ մնացի... հա. — Արգելքները վերանալով՝ սիրտդ ինձի պատկանի. —

Բանաստեղծիս բուռն խանգը  
Վառ բորբոքուած քո սիրով՝  
Քանի զնում, վառում է ինձ,

Դիմա, փրկիք շտապով:

(Մատնում՝ է Դաւիթը եւ տեսնելով նրան ոգեւորուած՝ կանգնում է դռան մօտ, լսում է եւ յետնւից ձեռք ու ոտքով նմանեցնում է նրա շարժուածքներին):

Այսօրուանից ամեն հնարք  
Թործ կը դնեմ օն և օն՝  
Հայ աշխարհի մուսայից մէջ  
Մի օր վայլել գերի Բայրոն:

ԳԱԼԻՔ. (Կողմը) Ելի աղէս անսազ աշըզ ա գաւել:

ՄԻՀՐԱՆ. Սահուն և ողորկ, ինչպէս ներդաշնակ մեղեղին սոխակի... երբէք այսպէս յաջողած չէր ինձ: Քո սէրն է, քո սէրը, այն, Սննման, որ զինեց ինձ: Ուխտում... երգւում եմ զոհ բերել այլ սրբազն սիրոյն ամեն բան, ինչ որ ինձ համար թանկ ու անդիահատելի է այս աշխարհում, միայն թէ արժանահայի քո անկեղծ սիրոյն...

ԳԱԼԻՔ. (Կողմը) Ինչ թունդ գէնի ա տալի տօ... չը նուազի բիրդան:

ՄԻՀՐԱՆ. Միայն թէ օվնէիր ինձ միշտ և յարատի անշէջ պահելու իմ մէջ այն երկնային բանաստեղծական սրբազն հուրը, որ շատ քշերին է սեղահական այս աշխարհում... միայն թէ...

ԳԱԼԻՔ. (Կողմը) Որ թովնեմ սա շատ ճեռօք պըտի անի. մօտենալով նրան) աղա...  
ՄԻՀՐԱՆ. (Ուշարեցուելով) Հ'ը, հ'ը... ինչ կայ Գաւիթ...

եկմա...

ԳԱԼԻՔ. Ո՞վ եկաւ աղա:

ՄԻՀՐԱՆ. Յոլակը, Յոլակը:

ԳԱԼԻՔ. Զէ աղա, Յոլակը շատ սպասեց ու զնաց... էս զիրն էլ տուեց, որ քեզ տամ. (տալիս է մի նամակ):

ՄԻՀՐԱՆ. Ո՞ւր զնաց:

ԳԱԼԻՔ. Ի՞նչ զիտեմ աղա... հալբաթ էղ թղթումը զրած կընի... իրանց թորոսն եկել էր կանչեց՝ տարաւ:

ՄԻՀՐԱՆ. Հանաւ տեսնենք ինչ է զրում. (Միհրանը կարդումէ) «Սիրելի Միհրան, այս բոպէիս մեր թորոս ծառան յետեկցո եկել էր: Մաթոս աղայենց տնից կանչել են ինձ շտապով, չը զիտեմ հայրն է՝ թէ աղջիկը. կաշխատեմ շուտով վերադառնալ և պատասխանդ վերցնել, իսկ եթէ չը կարողացայ՝ թորոսին կ'ուղարկեմ: Ներիս, որ քեզ չը խանգարելու համար ներս չ'եկայ: Եթէ պատասխանդ զեռ չես աւագակը՝ Յոլակ» Սյո ի՞նչ կը նշանակէ, (կանչում՝ է) Գաւիթ (ներս է զալիս Դաւիթը) վարմաց է զնացել, Գաւիթ:

ԳԱԼԻՔ. Խելի վախտ ա, աղա:

ՄԻՀՐԱՆ. (Կողմը) Տէր ողորմած Աստուած, զու վերջը բարի անես. (Նրան) զնալիս ոշինչ շանց:

ԳԱԼԻՔ. Բոլի մի խօսք, աղա:

ՄԻՀՐԱՆ. Բաս զու ինձ ինչն իմաց չը տուիր:

ԳԱԼԻՔ. Ի՞նչ իմաց տայի, աղա, (Կողմը) Յոլակը մի օյին ունի համար զլսի շեմ ընկնում:

ՄԻՀՐԱՆ. Ի՞նչ ես վնախթում:

ԳԱԼԻՔ. Բոլի, աղա... ասում եմ զնաց, համա տայ՝ թէ կը հարցնի, ասա շուտ կը զամ:

ՄԻՀՐԱՆ. Բաս մւր է չ'եկաւ:

ԳԱԼԻՔ. Ես ի՞նչ զիտեմ աղա:

ՄԻՀՐԱՆ. Զօռ իմանաս:

ԳԱԼԻՔ. (Կողմը) Եմ...

ՄԻՀՐԱՆ. Գրող իմանաս,

ԳԱԼԻՔ. (Կողմը) Հիմա էլ կասի ցաւ իմանաս. (Նրան) ախր...

ՄԻՀՐԱՆ. Յաւ իմանաս:

ԳԱԼԻՔ. (Կողմը) Տեսք, (Նրան) աղա չան...

ՄԻՀՐԱՅ. Քահը զիտ քու հօրի տսա, անոյիտան...  
ԳՈՒԻԹ. Սիր իմ մեղքի ի՞նչ ա...  
ՄԻՀՐԱՅ. Մեղքդ այս է, որ բարակամիտ են... տխմար  
անտառն:  
ԳՈՒԻԹ. Ես կուգէի հաստամիտ ըլիել, համա որ ուսում  
չեմ տուել, ես ի՞նչ անեմ, աղա:  
ՄԻՀՐԱՅ. Հաստամիտը զն ես... զետինը մտնես:  
ԳՈՒԻԹ. Հա աղա ջան, ես եմ:  
ՄԻՀՐԱՅ. Քեզ ասում եմ, զն ես, զն:  
ԳՈՒԻԹ. Հա ես եմ էլի, աղա... բարակամիտն էլ եմ ես  
հաստամիտն էլ:  
ՄԻՀՐԱՅ. Այս...  
ԳՈՒԻԹ. Հա, աղա ջան, հն:  
ՄԻՀՐԱՅ. Ցանցառ:  
ԳՈՒԻԹ. Թող ընի, աղա, (կողմը) էլի բաց արաւ մէ-  
շոկի բերանիլ:  
ՄԻՀՐԱՅ. Ցխմար...  
ԳՈՒԻԹ. Ղարու եմ, աղա:  
ՄԻՀՐԱՅ. Վայրենի...  
ԳՈՒԻԹ. Էդ էլ հէսարի:  
ՄԻՀՐԱՅ. Սարի արջ...  
ԳՈՒԻԹ. Սարի արջ:  
ՄԻՀՐԱՅ. Արջի Քօթօթ...  
ԳՈՒԻԹ. (Կողմը) Փոշմանեց... պստկացրեց. (Նրան)  
դրան էլ եմ դարուլ, աղա:  
ՄԻՀՐԱՅ. Խճնթ...  
ԳՈՒԻԹ. Ասա, աղա, ասա:  
ՄԻՀՐԱՅ. Գատարկապնրտ...  
ԳՈՒԻԹ. Ես ի՞նչ խօսք էր տօ (Նրան) ի՞նչ, աղա ջան...  
ՄԻՀՐԱՅ. Վ՞նի, զուռակ...  
ԳՈՒԻԹ. (Կողմը) Փառք Աստծու սլրծաւ... հըմի հէրժն

իմ ա. (Նրան) մի բան առեմ՝ աղա... (Ժատը պարանոցին  
տանիշլով) Ես աեզս հասցըիր, հէրիք ա...  
ՄԻՀՐԱՅ. Քեզ ասում եմ, վօնի... չուկակի...  
ԳՈՒԻԹ. (Կողմը) Սատանէն ասում ա բօղազից բռնի  
չոփի զետինին հա... (Նրան) վօն հա վօն... բան ես սորվել  
էլի... չես ուզում վօն կանեմ... շատ եմ վախում քու վօնիցը՝  
(շարժում է դէպի զուռը). ըհը', էս էլ քու վօնը... էլ յետ  
չը կանչես, թէ չէ եկազր չեմ... զուդ Մաթոս աղոնց տուի.  
(Դուքս է զնում):  
ՄԻՀՐԱՅ. (Կողմը) Այս ի՞նչ արի... իրաւ չը գնայ անի-  
ծուածը (յատեւից վազելով) էլի խոռվեցիր, (ըռնուր բա-  
շում է ներս) արի, արի, Գաւիթ ջան... ես մեղայ Աստծոյ...  
հանար էի անում:  
ԳՈՒԻԹ. Հանարը որի ա, աղա... ես ի՞նչ անեմ, թէ  
Ցոլակ աղին զնաց:  
ՄԻՀՐԱՅ Ի հարկէ, զու ի՞նչ անես... լիմարը նա էր, որ  
զնաց:  
ԳՈՒԻԹ. Գրուստն ասեմ, աղա, սիրոս բարակել ա, համրե-  
րութիւնս հատել... թէ մէկ էլ չարացել ես՝ զուզ զնալու եմ Մա-  
թոս աղի աղջկայ մօտ զանդառ: Գու ընենց զիտես չեմ իմաննում:  
ՄԻՀՐԱՅ. (Կողմը) Գրուստ, չը լինի սա ամէն բան զիտի,  
(Նրան) ի՞նչ ես իտանում:  
ԳՈՒԻԹ. Լաւ, էլ ի՞նչ ես թագցնում, աղա... համա լաւ  
աղջիկ ա ես ու իմ Աստծուածը:  
ՄԻՀՐԱՅ. Ո՞վ, առ անիծած:  
ԳՈՒԻԹ. Անմանկը, նի:  
ՄԻՀՐԱՅ. (Զեռքը նրա բերանին դնելով) Սուս՝ ո՛ ո՛.  
մարգու բան չ'ասես. (հանում է Յ ըուքլիանոց է տալիս)  
ոռ ու բերանկ փակիր:  
ԳՈՒԻԹ. (Առնելով փողը) Զեմ ասի, աղա, չէ. (Կողմը)  
լաւ խաղնա եմ զտել, մեր աղայ:

**ՄԻՀՐԱՆ.** (Դրսում ոտների ճայն է լսում) Սուսուսուս...  
ահս ավ եկաւ:

**ԴԱԻԻԹ.** Եա, էս մնց եկան, շիմացայ. էս սահաթիս, աղա.  
(գնում՝ է դուրս):

**ՄԻՀՐԱՆ.** Ով պէտք է լինի... (Դաւիթը ներս է զա-  
լիս) հը՛, ավ էր:

**ԴԱԻԻԹ.** Թորոսն էր աղա... մի զիր էր բերել ու մի  
շուշա... առ աղա ջան (տալիս է):

**ՄԻՀՐԱՆ.** Ինքն ինչ եկաւ:

**ԴԱԻԻԹ.** Ջատ վրաղ էր, զնաց, աղա ջան:

**ՄԻՀՐԱՆ.** Լաւ, դէհ, զու զնաց զուրսն սպասիր. թէ մարդ  
զալիս լինի՝ շուտ արի ինձ իմաց արա:

**ԴԱԻԻԹ.** Բաշուստա աղա. (գնում՝ է):

**ՄԻՀՐԱՆ.** (Նայելով ծրաբին) Ցոլակի ձեռքն է, ինչ  
պէտք է լինի. (բանում՝ կարդում՝ է) «Սիրելի՛ Միհրան,  
աչքը լո՛յս, այս երեկոյ թէյի ենք հրամբուած Աննմանի  
մօտ՝ ես եւ դու. իսկոյն պատրաստուիր: Սրա հետ ուղար-  
կում եմ եւ մի շիշ, որի մասին կարդա՛ ծրաբիս մէջ  
զետեղած Աննմանի նամակում, ես գործով գնացի սուրբ...  
իսկոյն կը վերադառնամ: Ցոլակ:»— Ով երջանկութէ՛նի...  
սիրեկի Ցոլակ, աղինը բարեկամ... բայց տեսնենք Աննմանս  
ինչ է զրում. (բռնում՝ կարդում՝ է) «Հոգոյս հատոր դու  
Միհրան, նամակիս պատրաստանին չսպասելով՝ հաճեցրի  
հօրս եւ ինդրում եմ ալ. Ցոլակի հետ շնորհ սերել երե-  
կոյեան մեզ մօտ թէյի: Ուղարկում եմ մի շիշ անուշահոտ  
Էլեկսիր Մelange.— մազերը երկայնացնելու դեղ է դա,  
իսկոյն քսիր մազերին, բեխերին եւ միքքիդ... Հետզհետէ  
զործածելով՝ կարծ միջոցի մէջ մազերդ կ'երկարին որպէս  
բանասեղծի մազեր: Լսեցի ՚ի պատասխան նամակիս մի  
գեղեցիկ բանաստեղծութին ես գրել, անհամշեր սպասում  
եմ մօտս կարդալու: Աննմանդ»:

Ո՞հ որշափ հողատար սիրտ ունի նա... իսկոյն, իսկոյն  
կօծեմ մազերս քու անուշահոտ դեղով... իսկոյն կը պատրաս-  
տուեմ... (կանչում՝ է) Փաւիթ, Գաւիթ...

**ԴԱԻԻԹ.** (ներս զալով) Եստեղ եմ, աղա:

**ՄԻՀՐԱՆ.** Մնա այստեղ և եթէ Ցոլակը կը գայ՝ ասա թող  
այստեղ սպասի, մինչև ես դուրս գամ... զնում եմ շորերս  
փոխելու:

**ԴԱԻԻԹ.** Լաւ, աղա ջան:

**ՄԻՀՐԱՆ.** Եթէ ուրիշ մարդ գալու լինի՝ չընդունես:

**ԴԱԻԻԹ.** Ջատ լաւ:

**ՄԻՀՐԱՆ.** Ուրիշի համար տանիք չեմ:

**ԴԱԻԻԹ.** Լաւ, աղա ջան, լաւ:

**ՄԻՀՐԱՆ.** Ուշքդ վրէդ պահիր, ականջդ բաց:

**ԴԱԻԻԹ.** Ուշքը վրէս ա, աղա, ականջս էլ բաց, զու միա-  
միտ զնա բանիդ: (Միհրանը գնում՝ է):

## Տ Ե Ս Ւ Լ Ը.

**ԴԱԻԻԹ.** ՅեթոՅ Յուլս ՈՒ ՄԻՀՐԱՆ.

**ԴԱԻԻԹ.** Վալլահ ըստեղ մի բան կայ... ամա հըլա չեմ  
հասկանում... բէլիս չի մտնում: Ցոլակ աղին լաւ խարեց...  
ըսկի տեղից ժամ չի եկել... հրէն զուսը թախ ա կացել...  
գիրն ու շուշէն էլ, խոստովանք պահէր՝ նա տուեց... ասաւ  
աղիդ կասիս, որ թորոսն ա բերել... մին մանէթ միշքաշ էլ  
նա տուեց... ինչ կուզի ընի՛ ես իմ մանէթի տէրն եմ...  
ջնանդամը, ում զլուխը կը ցաւի՛ թող ցաւի, մէջն ինչ ունիմ:;  
Գնամ տեսնեմ ինչ լլաւ (գնում՝ է դուրս, զուոք սանայիս  
երեսում՝ է Ցոլակի գլուխը):

**ՅՈՒ.Ս.Կ.** Հը՝, մրտեղ է... մը զնաց:

**ԴԱԻԻԹ.** Ներսի օթախումն ա, աղա:

**ՅՈՒ.Ս.Կ.** Ջուշն ինչ արաւ:

ԳԱԻԻԹ. Հետը ներս տարառ:

ՅՈՒ.Ա.Կ. Լաւ, դէհ գու զուրս արի:

ԳԱԻԻԹ. Ո՞նց որ կուզես աղա, (Դուքս է զնոսմ՝ Յուլիոս ներս է գալիս):

ՅՈՒ.Ա.Կ. Միկ ողորմելի բանաստեղծը կարծում է, որ իր ստացած կեղծ նամակները յիրաւի Անհմանիցն են... ապուշը չը վիտէ, որ նա բանից երբէք տեղեկութիւն չունի և իր անունն տնկամ չի ուզում լսել: Միծ ախորժակով սպասելիս կը լինի, որ երեկոյեան նրա մօտ թէյ խմի... հօրս ցաւը կը խմես գու... Մօտեցաւ ժամբ... հինց հիմի գու կըստանաս քս բոլոր ափեղցիեղ թղթակցութիւնների պատասխանը... պատասխան՝ որ մինչեւ զերեղմանդ չես մօռանալ և այնուհետեւ վերմակիդ համեմատ կը ձգես ոտքդ... ողորմելի թշուառական... ինքնակոչ բանաստեղծ... (Նայելով դէպի Միհրանի մտած սենեակը) բայց ինչ շատ է ուշանում... միթէ գեռ չէ...

ՄԻՀՐԱՆ. (Ներսի սենեակից) Վայ իմ արեին... էս ինչ եղաւ... պլոկուեցի... օգնեցէք... օգնեցէք... Դաւիթ...

ՅՈՒ.Ա.Կ. Melange-էն ներզործել է, (Դաւիթը ներս է գալիս) քեզ պահիր... չը ծիծագես՝ թէ չէ հոգիդ կը հանեմ, (դէպի ներս) ինչ է եղել, Միհրան, ինչ խաբար է:

ՄԻՀՐԱՆ. (Ներսից) Դու ես, 'ի ոէր Աստծոյ օգնութեան հասիր, Ցոլակ, այս ինչ դժբախտութիւն էր, Տէր Աստուած:

ՅՈՒ.Ա.Կ. Եկայ... մի վախիր (ներս է փախչում):

ԳԱԻԻԹ. Ի՞նչ պլատի ընի... մարդ իմանայ:

ՅՈՒ.Ա.Կ. (Ներսից) Վայ քուանամ ես, ներս արի, ներս, Դաւիթ. (Դաւիթը ներս է զնոսմ եւ երկուառվ Միհրանի ծնոքից աշ եւ ծախ կողմերից բռնած դուրս են ըերում զիսի մազմբը, միջուքը եւ բեխերը բոլորովին թափուած: Դաւիթը զլուխը մի կողմէ թեքած կուչ ու ծիզ է լինում, որ իրան պահի եւ ըստիծաղի): Էս ինչ բան է, մի ասա էլ,

Միհրան, շեմ հասկանում:

ՄԻՀՐԱՆ. Բայց այդ անկարելի բան է... անպատճառ տպանելումն են սխալուել... ես դատարանով կը պահանջեմ, հոգիները կը հանեմ... (Դաւիթը, որ շարունակ օրորում եւ իրան զնուում էր՝ չի կարողանում դիմանալ եւ թունդ ծիծաղում՝ է) Ի՞նչ ես ծիծագում, տօ զետինը մտած:

ԳԱԻԻԹ. Վալլահ, աղա, չը կարացի պահեմ, բիրդան գուրս պլծաւ, հա, հա, հա, հա...

ՅՈՒ.Ա.Կ. հա, հա, հա, հա...

ՄԻՀՐԱՆ. Զօռ ու ցաւ... ի՞նչ էր հոհուում:

ՅՈՒ.Ա.Կ. (Սեղանի վրայից հայելին վերցնում եւ մօտեցնում՝ է Միհրանին) Տես ամր էլ... ո՞նց չը ծիծագենք, թէ կարող ես՝ գու էլ մի ծիծաղի, հա, հա, հա...

ՄԻՀՐԱՆ. (Իրան պատկերը հայելու մէջ տեսնելով)

Դրուստ, էս ի՞նչ այլակերպ բան եմ եղել տօ:

ՅՈՒ.Ա.Կ. հա, հա, հա...

ԳԱԻԻԹ. (Ցոյց տալով Ցոլակի վրա) Հըլա երես ունի ծիծագում էլ ա... Ամա ըսկի ըսէնց եարամազ զալար չի էլնի հա, հա, հա...

(Տեսարան).

Վարազոյ:



Հայութաւ նէց պայման  
առանձին ... և այս վեճութեա քան ըստ Հ. Ա. Պ. Պ. Ա.

Անձնաւոր ով խօսքաւոր ու ... քայլաւի մէջ պատճենու  
առօս դաշտաւ, ու անձնաւոր Անձնաւ ով պատճենու  
ուու ու առանձին համարաւու Ջ. Խ. Ա. Ա. Վ. Վ. Վ. Վ. Վ.

Հայութաւ պայմանը ու այս չույրը Հ. Ա. Պ. Պ. Ա.

... ու ու

... ու ու

Հայութաւ ով զայք ... այս ու ու Հ. Ա. Պ. Պ. Ա.  
Ու ու առանձին անձնաւ պայմանը անձնաւու) Հ. Ա. Պ.

պատճենի ու ու Հ. Ա. Ա. պայմանը (անձնաւու) Հ. Ա. Պ.

... ու ու ու ու պատճենի ու ու

Հայութաւ ու ու պայմանը պայմանը անձնաւու Հ. Ա. Պ.

ու ու ու ու ու պայմանը պայմանը պայմանը պայմանը պայմանը

... ու ու ու ու ու պայմանը պայմանը պայմանը պայմանը պայմանը

պայմանը պայմանը պայմանը պայմանը պայմանը պայմանը



18858

3-2680

## ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

1.	Գառագիրք զծագըութեան, (թ. տիպ.) գինն է . . . . .	50 կոպ.
2.	Սկզբունք երկաշափութեան (Դիստերվէգի) . . . . .	40 "
3.	Վայելչաղըութեան դասաւանդութեան եղանակը . . . . .	20 "
4.	Հայկական գեղագրութիւն (դ. տիպ.) . . . . .	30 "
5.	Օժանգակ կըթութիւններ գեղագրութեան, . . . . .	3 "
6.	«Փառնակէս» Դրականական երեկոյ, վօդ. մի արար. . . . .	20 "
7.	" 200000, վօդ. մի արար. թ. բարեփ. ապագը. . . . .	40 "
8.	" Բանաստեղծ, վօդ. մի ար. թ. բարեփ. ապագ. . . . .	40 "
9.	" «Նիսիա», վօդ. մի արարուած . . . . .	40 "
10.	Սրու Կիսական առաջարկ առաջարկ առաջարկ . . . . .	25 "
11.	Կարտ Կիսական (փոքրատառեր) . . . . .	10 "
12.	" " (գլուխագրեր) . . . . .	10 "

## Պ Ա Հ Ե Ս Տ Ն Ե

Երեան, — Դրավաճառանոց Պետքու Յավհաննիսեանի  
Տիկիս, — " Կինդրոնական

Գումարով գնողների համար զիշումն կըլլինի:

Տպագրութեան համար պատրաստ են.

- 1) „Թէ մէկ էլ“.—Երակական պատկեր.
- 2) „Ակամա ուհի“ վօդ. 3 արարուած.
- 3) Ընտրութիւններ“ կօմ. 3 արար.
- 4) Новые образцы черченія.

Նախօրութիւն. Զուտով մամուլին կը յանձնուի „Դրականական երեկոյ“ կերպարանափոխ եղած և երկու արարուածի վերածուած:

2013

